ԳԵՐՄԱՆԱՑԻ ԱԿԱՆԱՏԵՍԻ ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՐՑԱԽՈՒՄ 1905 Թ. ՀԱՅ-ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

«Գետաբեկի պղնձարդյունաբերական հանքերը շատ հին են,—գրել է գերմանացի արդյունաբերող Վերներ ֆոն Սիմենսը—Նույնիսկ պնդում են, որ սա ամենահին հանքերից մեկն է, որտեղ դեռևս նախապատմական ժամանակներում պղինձ էր արդյունահանվում»[1]։ Սիմենս եղբայրները՝ Կարլը, Վիլհելմը և Վալտերը, Հյուսիսային Արցախի գեղատեսիլ Շամախիի հովտում ընկած Գետաբեկի հանքը և հանքամշակման գործարանը ձեռք բերեցին 1864 թ. գերմանացի և հայ նախկին տերերից, մատչելի գնով՝ 77.000 ռուբլով, այն ժամանակ, երբ Թիֆլիսում կովկասյան հեռախոսացանցի ընդլայնման և վերանորոգման աշխատանքները կատարելուց հետո Վալտեր ֆոն Սիմենսը Անդրկովկասում գործունեության նոր ոլորտներ էր փնտրում։ 1867 թ. տեխնիկապես նորացված հանքում սկսում է գործել ձուլարանը, իսկ 1865—68 թթ. Սիմենս եղբայրները գնում են նաև Դաշքեսանի կոբալտի և երկաթի հանքը (Գետաբեկից 40 կմ հարավ-արևելք), 1879-ին Քալաքենդում կառուցում են պղնձի երկրորդ հանքը (մինչև 1903 թ.)։ Ավելի քան կես դար, մինչև Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո կատարված անհատույց սեփականազրկումը, Գետաբեկի պղնձարդյունաբերական հանքերը մնում են Սիմենս ընտանիքի և նրա ժառանգների սեփականությունը։ 1900—1906 թթ. գործարանի պատմության վերաբերյալ Սիմենսի արխիվում պահպանվում են երկու հաղորդագրություն՝ այն ժամանակվա դիրեկտորների կողմից։ Գուստավ Կյոլեն (գործարանի տնօրեն՝ 1900—1906 թթ.) 1906 թ. շարադրել է «Կովկասի Գետաբեկի պղնձարդյունաբերական գործարանի պատմությունը», որը Վոլֆգանգ Ցորնը 1965 թ. հրատարակել է հատվածաբար[2]։ Սակայն մինչև օրս անտիպ է մնացել նրա հետևորդ Ադոլֆ Օհրնի՝ 1906 թ. հունվարի 10—23-ի հաղորդագրությունը։ Ա. Օհրնը 1905 թ. օգոստոսի 19-ից փոխարինում է տնօրեն Կյոլենին, իսկ 1906-ի մարտից մինչև սեփականազրկումը ստանձնում է գործարանի ղեկավարությունը։ Իր հաղորդման մեջ Օհրնը հանգամանալից կերպով նկարագրում է 1905 թ. նոյեմբերին Գետաբեկում և նրա շրջակայքում ծայր առած հայ-ադրբեջանական ընդհարումները, որոնց ընթացքում տեղի էին ունենում հայերի շարքեր (Ջաղիրի մոտ՝ 19. XI. 1905, Գետաբեկում՝ 25. XI. 1905), ինչպես նաև հայկական պաշտպանական գյուղ Ջարգախլուի (Շամխորի շրջան) պաշարումը ադրբեջանական հրոսակների կողմից, հայերի պատասխան գործողությունները գերեվարված ադրբեջանցիների (Ջարգախլու, 30. XI. 1905) և ադրբեջանական Սողուքլու գյուղի բնակչության նկատմամբ (30. XII. 1905, 1. I. 1906)։ Այդ կռիվների ու շարքերի զոհն են դարձել 110 մարդ (65 հայ, 45 ադրբեջանցի)։ Ինչպես 1904—1905 թթ. մյուս հայ-ադրբեջանական ընդհարումները (Բաքու, Ելիզավետպոլ, Արցախ), այնպես էլ Կյոլենի և Օհրնի նկարագրած բախումներն ընթանում էին հետևյալ սխեմայով՝ ադրբեջանական հարձակումներ և անկարգություններ, պետական իշխանությունների (ոստիկանություն, բանակ) ուշացած միջամտություն և ապա՝ հայկական պատասխան գործողություններ։

Մինչև այսօր մեծ մասամբ հայերով բնակեցված Հյուսիսային Արցախը Կյոլեն և Օհրնը նկարագրում էին որպես էթնիկական կազմով խառը մարզ, որտեղ բացի հայկական և ադրբեջանական գյուղերից՝ կային նաև ռուս աղանդավորական ավաններ (ինչպես, օրինակ, Նովո-Սարատովկա, Նովո-Իվանովկա, Գոլիցինո, Սլավյանկա), կար նաև շվեդական գաղութ Ահենդորֆը։ Էթնիկապես խառն էր նաև Գետաբեկի բնակչությունը։ 1905 թ. Սիմենսի հանքերում աշխատում էին մինչև 800 առավելապես թուրք և փոքրասիական հույն հանքափորներ, իսկ մետաձուլարանում՝ մոտ 400 տեղաբնակ հայեր և ադրբեջանցիներ։

Կյոլեն և Օհրնը 1905 թ. իրադարձությունները նախ դիտում էին գերմանական շահերին հասցված լուրջ վնասի տեսանկյունից։ Բացի դրանից, Կյոլենի զեկուցագիրը եթանգավոր-

---

[1] Werner Siemens, Kaukasus[illegible]en, Zeulenroda, 19[illegible]3, S. 3.

[2] Wolfgang Zorn, Vo[illegible]enerku[illegible] zu Koelle Gustav. Aus der Geschichte eines deutschen Berg—und Hü[illegible]n [illegible]ens is Rubland, Das Kupferwerk Kedabeg des Hauses Siemens 1[illegible]06—1906 ([illegible], 1965, Heft 10).

ված է սոցիալական, քաղաքական և ազգային կանխակալ կարծիքներով՝ գործադուլային շարժման դեմ ընդհանուր առմամբ, և հայերի՝ որպես Անդրկովկասում «հեղափոխական տարրի» հանդեպ՝ մասնավորապես։ Գործադուլավորների մասին Կյոլեն գրում է. «Գետաբեկի համար 1905 թ. նույնպես անհաջող եղավ, ամենուրեք ավելանում էին գործադուլները, համաձայնագրերը կնքվում էին միայն գործարանների հաշվին, որի հետևանքով գործադուլավորների անամոթությունը ավելի անսահման և նրանց դիրքը ավելի ու ավելի սպառնալից էր դառնում։ Նրանց պահանջները քաղաքներում և գործարաններում աճում էին։ Նրանք պահանջում էին էլեկտրական լուսավորություն իրենց բնակարաններում, այնպիսի վայրերում, որտեղ բոլորովին էլեկտրակայաններ չկային, անվճար տեղափոխություն դեպի աշխատավայր՝ կարգին լծված կառքերով, գրադարաններ և ընթերցասրահներ, չնայած, որ նրանց մեծամասնությունը անգրագետ էր, դրա հետ մեկտեղ 8-ժամյա աշխատանքային օր, որին հետո ամենուրեք անցան»[3]։

Հակահայկական անկարգությունների պատճառը Գետաբեկի մոտ, ըստ Կյոլեի, 1905 թ. փետրվարի 8-ի Բաքվի և Երևանի նահանգի հայկական շարդերն էին, որտեղ 1905-ի մայիսին «սարսափելի արյունահեղությամբ մոտ 50 հայկական բնակավայրեր են ավերվել»։ «Թաթարների» ատելությունը հայերի նկատմամբ կրոնականից առավել՝ տնտեսական շարժառիթներից է սնուցվում։ Ինչպես իր ժամանակի շատ գերմանացիներ, Կյոլեն հայերին նկարագրում է որպես կովկասյան կամ փոքրասիական հրեաների, հանձին նրանց տեսնում անգլիական նպատակներ իրականացնողներին՝ Օսմանյան կայսրության մեջ, «որտեղ հանրահայտ հայկական շարդերի պատճառն էին այդ ժողովրդի՝ անգլիական ազդեցությունից խթանվող հակակառավարական ձգտումները, ինչպես և վաշխառուական շահագործումը։ Նույնն էր վիճակը նաև Կովկասում, և այդ պատճառով ոստիկանությունը իրեն հեռու էր պահում այդ սարսափելի տպանդից, որը ռուսական կառավարության համար բոլորովին էլ անցանկալի չէր՝ հայերի վնասակար քաղաքական գործունեության պատճառով։ Ակնհայտ էր, որ շատ վայրերում թաթարների գործողությունները նույնիսկ հովանավորվում են, և այդպիսի թողտվության շնորհիվ, իհարկե, այդ կրակն ավելի էր բորբոքվում»[4]։

Նշված երկու աղբյուրներում հարցի գնահատման ճշմարտացիությունը բացահայտ հակադրության մեջ էր հայկական տեսանկյունից արված մեկնաբանությունների և բացատրությունների հետ։ Այն, որ Գետաբեկի գործարանի գերմանացի ղեկավարները ճգնաժամային պահերին ավելի շատ ադրբեջանցիների կողմն էին, քան հայերի, հաստատում է այն վստահությունը, որ 1905-ի սեպտեմբերից վայելում էր Գետաբեկի պրիստավ Մուսեիբ Ալիևը, ինչպես նաև այն փաստը, որ գործարանի պահակային ծառայությունը (60 զինված պահակ, ինչպես նաև Ալիևի կողմից հավաքագրված 12 պահակ) հարևան Արոխդամ գյուղի ադրբեջանցիներն էին։

Լեռնային Ղարաբաղի և Հյուսիսային Արցախի ներկայիս ընդհարումների խորքի վրա Սիմենսի արխիվի զեկուցագրերը արժանի են ուշադրության բազմաթիվ տեսանկյուններից։ Դրանք լույս են սփռում ոչ միայն այդ տարածքաշրջանի տնտեսական և սոցիալական պատմության, այլև միջէթնիկական հարաբերությունների վրա։ Ընդ որում, առանձին պետք է քննել զեկուցողների սուբյեկտիվ տեսանկյունը։

ՏԵՍՍԱ ՀՈՖՄԱՆ
(ԳՖՀ)

Գետաբեկ, 10/23, հունվար 1906

Մեծարգո պարոն ՍԻՄԵՆՍ

Ինչպես ես արդեն հիշատակել էի նոյեմբերի 21—դեկտեմբերի 4-ի իմ նամակում, նոյեմբերի 18-ին Ելիզավետպոլում թաթարների և հայերի միջև տկսվել էր մի կատաղի պայքար։ Այդ պատճառով այստեղ տիրում էր բոլորի հոգիները ճնշող տրամադրություն։ Պարզ է, որ մի կայծ էր պետք, որպեսզի այստեղ, որտեղ հայերն ու թաթարները խառը ապրում էին, բորբոքվեր ազգային կույր մոլեռանդության կրակը։ Ելիզավետպոլում հայ-թաթարական գժտությունների ծագման համար ուղղակի առիթ է եղել այն պա-

3 Նույն տեղում, էջ 221։
4 Նույն տեղում, էջ 222։

յադան, որ նոյեմբերի 16-ի առավոտյան քաղաքում լուր է տարածվել (որը այժմ էլ դեռ չի հաստատվել), թե քաղաքի մոտերքում, կամրջի տակ բազմաթիվ սպանված թաթարների դիակներ են գտնվել։

Անմիջապես թաթարական մի ամբոխ ներխուժեց... հայկական խանութներ և սկսեց ատրճանակներով ու դաշույններով սպանել հայ վաճառականներին։ Թաթարական խանութները մահմեդական հանգստի օրվա առիթով փակ էին։ Դրան հաջորդեցին խանութների հրդեհումը և երկկողմանի սպանդն ու թալանը, որոնք գնալով ավելի մեծ չափեր էին ընդունում։ Դժբախտաբար սակավաթիվ զինվորները եռանդուն չմիջամտեցին հրետանիով, որով և օժանդակեցին դրսի թաթարների մեծաքանակ հոսքին։ Այդպիսով, ժամանակին չկասեցվեց ավերիչ գործը և քաղաքի մեծ մասը մի քանի օրվա ընթացքում վերածվեց ավերակների կույտի։ Այդ իրադարձությունների լուրը տարածվեց արագությամբ։ Արդեն այս նոյեմբերի 18-ին Դալլեր կայարանի հայկական խանութները թալանվեցին շրջակայքի թաթարների կողմից։ Հաջորդ երեկո նույն ճակատագրին արժանացան Անենֆելդ գաղութի հայկական խանութները։ Դրանց տերերը փախուստի էին դիմում կամ թաքնվում։ Նույնը վերաբերում է նաև գերմանական գաղութներում աշխատող հայ ծառաներին։ Թալանող թաթարները թվային այնպիսի գերազանցություն էին կազմում և այնքան սպառնալից էին իրենց պահում, որ ոչ ներկա ոստիկանության պրիստավը իր ոստիկաններով, ոչ էլ նույնիսկ գաղութաբնակները իրավունք չունեին միջամտելու։ Կողոպուտը Դալլեր կայարանում առանց վախի շարունակվում է նաև հաջորդ օրը։ Գրասենյակներին բարձած տանում էին վերջին տախտակներն ու պատուհանների շրջանակները։ 14 հայերից, որոնք այդ օրը գաղութից Ջաղիր գյուղն էին ուղում փախչել, 12-ը ճանապարհին սպանվեցին։ Հաջորդ օրն արդեն կտրվեց հեռախոսակապը Ջարդախլուի և Դալլերի միջև։ Թաթարները ուժեղ ճնշում են գործադրում հայկական Բաղուքենդ գյուղի վրա և թալանում ու այրում են գյուղից հեռու ընկած 38 տուն։ Ջարդախլուի մոտ էլ են հայտնվում թաթարների հորդաները, սակայն չեն համարձակվում հարձակվել։

Արդեն նախորդ օրը շատ հայ բանվորներ ու ծառայողներ տեղական համայնքների պահանջով հեռացել էին իրենց գյուղերը, նոյեմբերի 22-ի երկրորդ կեսին հեռացան այդ վայրերից եկած վերջին հայերը։ Չնայած դրան, Գետաբեկում մնացին հայկական ընտանիքներ, որոնք մշտապես ապրում էին գործարանում, և այստեղ էին գտնվում նրանց տներն ու ամբողջ ունեցվածքը։ Կեսօրից հետո ժամը 5-ն անց քառորդին, մթնշաղին, երբ գրասենյակում դեռ աշխատում էին, հանկարծ կրակոցներ լսվեցին շուկայի և հին հայկական եկեղեցու կողմից։ Գրասենյակը անմիջապես փակվեց։ Ոստիկան Ալիևը Սուլեյման բեկի հետ ուզում էին գնալ շուկա, բայց կիսաճանապարհին հետ դառան, որովհետև կրակոցները շարունակվում էին։ Հավանաբար, զենքն ուղղված էր եղել նրանց վրա։ Կրակոցների համար առիթ էին դարձել օգնության կանչերը շուկայի կողմից, որտեղ եկվոր թաթարները մի հայի հրացան էին խլել։ Հայ եկեղեցու բակում ապաստանած հայերը, նրանց թվում նաև Թուրքիայից այս կողմն անցած հայկական կոմիտեի անդամներ, որոնք զինված էին նոր եռափող հրացաններով, անմիջապես կրակ բացեցին շուկայի ուղղությամբ, որտեղից անընդմեջ պատասխան էր տրվում։ Հուշարձանի մոտ հավաքված գիշերային պահակները, մոտ 10 մարդ, կարծելով, որ կրակն ուղղված է նաև իրենց վրա, առանց հրամանի, հանկարծակի ուժեղ կրակահերթ բացեցին դեպի եկեղեցու բակը։ Ինձ և հավաքված մյուս ծառայողներին դժվարությամբ հաջողվեց հանգստացնել նրանց այն բանից հետո, երբ առնվազն 30 գնդակ էր արձակվել։ Այդ ընթացքում շուկայում շարունակվում էին կրակոցները, և գնդակները անդադար սուլում էին Գլխավոր շենքի և ծառայողների բնակարանների ու այգիների միջով և մերթընդմերթ ծակում շենքերի ծպեղագերանները։ Տնից դուրս գալը դառնում էր կյանքի համար վտանգավոր։ Դատական քննիչ Լիպսկին, որն այդ ժամանակ հյուրանոցից դուրս էր եկել և գնացել շուկայի

ուղղությամբ, սպանվեց։ Նրա մարմինը գտան հաջորդ օրը, ավերված մի խանութի հետնամասում։ Այդ ընթացքում շուկայում հայտնվեցին 220 հեծյալ թաթարներ (180 մարդ Այգլիից և 40 մարդ Հիլիհանլիից) և այդտեղից դուրս մղեցին հայերին, որոնք իրենց տներից կրակում և ռումբեր էին նետում։ Այդ պատճառով որոտացող ուժեղ պայթյունները պարզորոշ տարբերվում են հրացանի կրակոցներից։ Յոթն անց կեսին շուկայում բարձրացավ առաջին կրակը. սկզբում վառվեց պարսիկ Ալասկերի խանութը, որը հայերը թալանել ու այրել էին։ Այնուհետև հայերն իրենք հրդեհեցին վաճառական Ավետիս Ավանեսովի խանութը։ Հաջորդաբար նույն ճակատագրին արժանացան մնացած հայկական և մի քանի թաթարական խանութները։

Այդ սարսափելի գիշերը ես գտնվում էի Հ. Բինոֆի բնակարանում, որտեղից դիտում էի և գրասենյակի իրադարձությունները։ Սուլեյման բեկը և պրիստավ Ալիևը մնում էին № 2 տան ներքևի բնակարանում։ Նյարդային հուզումը հազիվ թե որևէ մեկին թողներ աչք փակել։ Շուկայի կողմից անընդմեջ հասնում էին հրացանների և ռումբերի ձայներ, ինչպես նաև զոռում-գոչյուններ։ Թաթարները հետախուզում էին բնակարաններն ու զինանոցները և սպանում բոլոր հայերին, ովքեր չէին կարողացել փախչել։ Այդպես սպանվեցին վաճառական Գասպար Բաղդասարով-Զալահյանը՝ կնոջ, ծնողների, քույրերի և եղբայրների հետ, արծաթագործներ Հովսեփ Դանիլովը և Ավագ Պետրոսովը՝ իրենց ընտանիքների, փոքր երեխաների հետ։ Նույն ճակատագրին արժանացան դարբիններ Սարգիսն ու Իսային և նրանց ընտանիքները։ Ատաղձագործ Պետրոս Մովսիսյանցը եղբայրների և մոր հետ, ինչպես նաև Զարդախլու գյուղից մի կին՝ 4 երեխաներով թաքնվել էին հանքագործ Պավլի Պանդոլիի բնակարանում, որտեղ նրանց հայտնաբերեցին և անգթորեն սպանեցին։ Բոլոր դիակները՝ մոտ 35-ի չափ, նետեցին մի խրճիթ և այրեցին։ Նրանց մնացորդները գտնվեցին միայն շաբաթներ հետո, և հողին հանձնեցին։ Մեր ժամագործ Ալեքսանդր Բոլախանյանցի կտրված ձեռքով դիակը գտնվեց հաջորդ առավոտ՝ ռուսական եկեղեցի տանող ճանապարհին։

Հաջորդ առավոտյան միայն մի քանի դիակ էին ընկած մնում շուկայի մեջտեղում։ Գործարանը կանգնեցվեց արդեն նախորդ երեկոյան։ Թաթարական ավազակախմբերի վախից կայարանում ապրող հսկիչներն ու բանվորները փախան հանքահոր, այդ ընթացքում կողոպտվեցին նրանց բնակարանները։ Վաղ առավոտյան սպանվեց դինամիտի նկուղի պահակ Ավետիս Պապիևը։ Այնուհետև սկսվեց Վերին հանքերի մերձակա հայկական թաղամասերի կողոպուտը։ Այստեղ ապրող թաթարներն ու թուրքերը փախուստի դիմեցին, նրանց ունեցվածքը թալանվեց։

Բարոն Լիվենի հանձնած հաղորդագրությունից հետո Ալիևը մի քանի պահականներ հետ արշավում է հանքի վրա, քշում ավազակներին և հարևան թաթարական Արոխդամ գյուղից 12 զինված պահակներ կանգնեցնում, որոնց պետք է ամեն քսանչորս ժամը մեկ 5 ռուբլի վճարվեր։ Մետաղաձուլարանի վրա նույնպես 60 զինված պահակներ են կարգվում շրջակա Գյառգյառ, Կարամուրադ և Միսկինլի գյուղերից։ Պրիստավի ծառայողները ևս մասնակցում են հսկելուն։ Առաջին օրերին մենք ստիպված էինք պահակներին 5 ռուբլու ահռելի աշխատավարձ վճարել 24 ժամվա համար, քանի որ մենք միայն այդպիսի աշխատավարձով կարող էինք նրանց հեռու պահել թալանելուց, ինչը նրանց համար ավելի ձեռնտու կլիներ։ Նրանց ծառայությունը արդարև կապված էր մեծ վտանգի հետ....

Հազախլեցի հայերը, գիտակցելով, որ իրենք չեն կարող դիմադրավել թաթարական գերազանց ուժերին, նոյեմբերի 24-ի գիշերը թողեցին գյուղը և կանանց ու երեխաների, անասունների և այն ամենի հետ, ինչը կարող էին վերցնել իրենց հետ, Սլավյենկոյի վրայով գնացին Զարդախլու՝ լավ զինված վերջապահ զինվորների ուղեկցությամբ։ Այդ փախուստը այնքան լավ էր կազմակերպվել, որ ճանապարհին հետապնդումներից միայն երկու հայ էին սպանվել։ Նոյեմբերի 24-ի առավոտյան հեծյալ թաթարների մեծաթիվ ջոկատները բոլոր կողմերից գալիս էին դեպի Գետաբեկ և շրջափակում գոր-

ծարանը։ Գործարանի բնակչության մեջ աճում էր խուճապը, քանի որ չգիտեին, թե թաթարներն ինչ են մտադիր անելու։ Պրիստավը իր պահապանների հետ գնում է հանքահորի հետնամաս, որտեղ սարի ստորոտին մի մեծ ժողով է տեղի ունենում։ Դրանից հետո թաթարները գնում են Ղազախլի և հետապնդում փախուստի դիմած բնակիչներին։ Այստեղ միաժամանակ սկրսվում են կողոպուտն ու թալանը, որ ավելի անամոթ ձևով շարունակվում են Գետաբեկի շուկայում և զորանոցներում։ Թալանված իրերը սայլերով կրում են ամայացած բնակարաններից, դռներն ու պատուհանները են հանում, երբեմն նույնիսկ կացնով։ Մեր տներում ապաստանած հայերի վիճակը գնալով ավելի էր ծանրանում, քանի որ թաթարներն ավելի համառորեն էին պահանջում նրանց հանձնել։

Պրիստավի հետ խորհրդակցելուց հետո մենք եկանք այն համոզման, որ մեր այսպես կոչված «գերիների» փրկության միակ հնարավորությունն այն էր, որ նրանց, որքան հնարավոր է, շուտ տեղափոխենք։ Պրիստավ Ալիևը պատրաստակամություն է հայտնում «գերի» հայերին իր անձնական պաշտպանության ներքո հեռացնել։ Ծանր բանակցություններից հետո, ոստիկանի ներկայությամբ թաթարները ի վերջո հանդիսավոր խոստացան չխանգարել այդ ծրագիրը իրագործելուն։

Հաջորդ օրը վաղ առավոտյան (ուրբաթ, նոյեմբերի 25-ին) 3 ծածկասայլ բերեցին և փախստական հայերին տեղափոխեցին դրանց մեջ։ Ժամը յոթն անց կեսին ծածկասայլերը շարժվեցին։ 40—45 հոգի էին, դրանց թվում նաև կանայք ու երեխաներ։ Ալիևը 8 պահապաններով և թաթարական 2 գյուղերի ավագներով ուղեկցում էր այդ տրանսպորտը։ Ես ուղեկցեցի նրանց բակից դուրս, մինչև ճանապարհ։ Սակայն հազիվ էին սայլերը հասել ռուսական եկեղեցու մոտերքը, երբ նրանց վրա կրակեցին։ Սայլերի մեջ նստածները վայրի սարսափով դուրս թռան, որպեսզի փախչելով փրկեն իրենց կյանքը։ Առաջինը սպանվեց սայլապան Գրիգորը և ջախջախված գլխով մնաց ճանապարհին ընկած։ Պրիստավ Ալիևը հերոսաբար կռվում էր մարդասպանների դեմ և իր ձեռքով սպանեց մի ուխտադրուժի։ Ալիևի պաշտպանությունը հայցող մի հայի (Զինգեր ընկերության շրջիկ առևտրականը) կրակոցով սպանեցին նրա թևերի մեջ։ Հսկիչ Համբարձում Թումանովը, ատաղձագործ Պետրոս Խաչատուրովը և ծեր փականագործ Սարդիս Շահնազարովը փախուստի ճանապարհին սպանվեցին։ Գրասենյակի շենքի փակ դարպասի մոտ խփեցին մի կնոջ։ Շատ տղաներ փախել էին ճանապարհից ներքև գտնվող ձորը և փորձում էին փրկվել կամրջի տակ։ Նրանց այդտեղից դուրս քշեցին և անխնա մորթեցին։ Ծեր փականագործ Ամիրովի ամենափոքր աղջկան (Մարգարիտ, 16 տարեկան) թաթարները դուրս են քաշում կամրջի տակից և առևանգում։ Ծեր Ամիրովը փախչում է, բայց հետո, ինչպես պատմում են, Բարսումի ճանապարհին դառնում է թաթարների զոհը։ Կապի փականագործ Մելիք-Շահնազարովին և ատաղձագործներ Ալեքսանդր Ալթումովին ու Ամիրհասանին հաջողվում է փախչել։ Միայն սարսափելի զրկանքներով անցկացրած 3 օրից հետո նրանք փրկվում են Ջարդախլու գյուղում։ Պրիստավ Ալիևը հավաքում է կենդանի մնացած կանանց ու երեխաներին, մոտ 30 մարդ և նրանց տեղավորում գործարանի հիվանդանոցում։

Ջարդախլուից պոմպի վարպետ Լենցը հեռախոսով հայտնում է, որ նրա և գյուղի բնակիչների դրությունը գնալով ավելի հուսահատ է դառնում։ Տարբեր կողմերից գյուղը սեղմվում է և միայն լավ կազմակերպված պաշտպանության շնորհիվ կարողանում է դիմադրել։ Կարմիր դրոշով հեծյալ թաթարների ավելի մեծ խմբեր են տեսել հանքերի մոտ, նրանք գնալիս են եղել Ջարդախլու։ Միայն նոյեմբերի 26-ին՝ շաբաթ օրը, վերջապես հաջողվում է կողոպտիչներին կանգնեցնել և կազմակերպել զորանոցների հսկողությունը։

Նոյեմբերի 28-ին, մութն ընկնելու հետ, Ջարդախլու է մտնում Նիժեգորոդյան գնդի դրագունների մի հեծելավաշտ։

Չորեքշաբթի, 30-ը նոյեմբերի։ Գետաբեկի մոտով կրկին անցնում են կարմիր դրոշով հեծյալ թաթարների հորդաներ՝ դեպի Ջարդախլու։ Սպան-

վում է մի հայ, շատերը վիրավորվում են։ 15 թաթար մառախուղի մեջ հետ են ընկնում, չարդախլեցիները նրանց գերի են վերցնում և ոչնչացնում։

Հինգշաբթի, 1-ը դեկտեմբերի։ Հանքում սկսվել է ավերված կայարանների վերանորոգումը։ Սլավյենկոյի կողքով Չարդախլու են գնում թաթարների ուրիշ հորդաներ՝ կարմիր դրոշով։ Գյուղը խիստ պաշարված է։ Նկատի ունենալով իրենց սակավաթվությունը, զինվորներն իրենց հեռու են պահում Չարդախլուն շրջապատած թաթարների վրա հարձակվելուց և սահմանափակվում են միայն նրանով, որ ազատ են պահում ճանապարհը։

Հինգշաբթի, 8-ը դեկտեմբերի։ Դրագունների հետ առավոտյան Չարդախլուի վրայով մեկնում եմ Անենֆելդ։ Չարդախլուում ինձ ողջունում են շատ ծանոթ հայեր նաև Ղազախլիից։ Նրանք խնդրում են ինձ օգնել այլուր ձեռք բերելու, քանի որ թաթարները ավերել են իրենց ալրաղացները։

Այն, որ այստեղ դեռևս հեռու է երաղած խաղաղությունը, ապացուցում է այն տխուր փաստը, որ Նոր տարվա գիշերը հայերի կողմից զինված հարձակում է կատարվել հարևան Սողուքլի գյուղի վրա (Գետաբեկից 4 վերստ հեռու)։ Շնորհիվ պատահականորեն այստեղ գիշերող զինվորների միջամտության, հարձակումը շուտով ետ է մղվել։ Չնայած դրան, թաթարների կողմից 30 սպանվածներ կային, հայերը տարել էին նաև բոլոր անասունները։ Հայերը, որոնք եկել էին Նովո-Գորելովկա գյուղի վրայով, 17 սպանված են ունեցել։

Ձեզ նվիրված ԱԴՈԼՖ ՕՀՐՆ